

- Հուլիսին տնտեսական աճը կազմեց 8.9 տոկոս (տ/տ)՝ աճողական ցուցանիշը հասցնելով 7.1 տոկոսի:
- Հուլիսին զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումներն ավելացան 42.3 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված Ռուսաստանից ներհոսքերով:
- Օգոստոսին գնաճը հասավ 3.6 տոկոսի և ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ թողեց:
- Արտահանումը և ներմուծումը շարունակեցին նվազել (տ/տ)՝ պայմանավորված թանկարժեք քարերի և մետաղների վերաարտահանման փուլային դադարեցմամբ:
- Հունվարից հուլիսն ընկած ժամանակահատվածում բյուջեում գրանցվեց ՀՆԱ-ի 0.6 տոկոսի չափով աճողական պակասորդ:

Հուլիսին տնտեսական ակտիվության աճը հասավ 8.9 տոկոսի (տ/տ՝ տվյալ ժամանակահատվածը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)՝ առաջին եռամսյակի 6.7 տոկոսից բարձրանալով (տ/տ) (պատկեր 1): Հուլիսին աճը պայմանավորված էր շինարարության ճյուղի բարձր ակտիվությամբ (աճը՝ 26.1 տոկոս, տ/տ), ծառայություններով, առանց առևտրի (աճը՝ 11.1 տոկոս, տ/տ) և արդյունաբերությամբ (աճը՝ 4.2 տոկոս, տ/տ, որը հաջորդեց հունիսին 1.2 տոկոսով նվազմանը, տ/տ): Արդյունաբերության աճն աշխուժացավ 31.5 տոկոսով (տ/տ) էլեկտրաէներգիայի արտադրության արագ աճի և 3.3 տոկոսով (տ/տ) մշակող արդյունաբերության աճի շնորհիվ, որին օժանդակեցին սննդի (աճը՝ 11 տոկոս, տ/տ) և ծխախոտի (աճը՝ 39 տոկոս, տ/տ) ավելի մեծ արտադրությունը: Հանքարդյունաբերության ակտիվությունը փոփոխական է մնում. հունիսի 10 տոկոսով (տ/տ) աճին հաջորդեց հուլիսի 8.4 տոկոսով (տ/տ) նվազումը: Առևտրի աճը կազմեց 3 տոկոս (տ/տ): Հուլիսին իրաքավանական անձանց գրանցումներն ավելացան 4 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված ՄՊԸ-ների գրանցման 30.2 տոկոս (տ/տ) աճով, որն օգնեց չեզոքացնելու անհատ ձեռներեցների գրանցումների 3.9 տոկոսով (տ/տ) նվազումը:

Հուլիսին զուտ առևտրային դրամական փոխանցումների բարձր աճը պահպանվեց՝ կազմելով 42.3 տոկոս (տ/տ): Նշվածը պայմանավորված էր Ռուսաստանից զուտ

ներհոսքերի 68.9 տոկոսով (տ/տ) ավելացման հետ, որին բաժին է ընկնում ընդհանուր զուտ ներհոսքերի 65 տոկոսը, և Միացյալ Նահանգներից զուտ ներհոսքերի 16.4 տոկոսով (տ/տ) աճով (պատկեր 2): Առաջին եռամսյակում գործազրկության մակարդակը նվազեց՝ 2024 թ. առաջին եռամսյակի 15.5 տոկոս մակարդակից իջնելով մինչև 14 տոկոս, իսկ զբաղվածության և աշխատուժի մասնակցության մակարդակը համապատասխանաբար 50.1 և 58.2 տոկոս էր:

Տարեկան գնաճն օգոստոսին բարձրացավ՝ հուլիսի 3.4 տոկոսից հասնելով 3.6 տոկոսի (պատկեր 3): Գնաճի բարձր մակարդակը պահպանվեց սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների (4.9 տոկոս), ալկոհոլային խմիչքների (6.6 տոկոս), կրթության (7.8 տոկոս), տրանսպորտի (6 տոկոս) դեպքում: Օգոստոսի 5-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույքն անփոփոխ՝ 6.75 տոկոս թողեց և հայտարարեց, որ հաջորդ 12 ամիսների ընթացքում ակնկալում է վերաֆինանսավորման տոկոսադրույքի աստիճանական իջեցում՝ մինչև մոտավորապես 6.25 տոկոս:

Հուլիսին արտահանումը ու ներմուծումը նվազեցին՝ պայմանավորված վերաարտահանման շարունակվող փուլային դադարեցմամբ (պատկեր 4): Արտահանումը հուլիսին նվազեց 15.4 տոկոսով (տ/տ)՝ մայիսին արձանագրված 39 տոկոսով (տ/տ) անկման համեմատ: Ներմուծումը նվազեց 16.5 տոկոսով (տ/տ)՝ մայիսի համեմատ նմանատիպ ավելի փոքր նվազմամբ: Հուլիսին թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների արտահանումն ու ներմուծումը նվազեց շուրջ 59 տոկոսով (տ/տ)՝ որպես ընդհանուր արտահանման և ներմուծման ընդհանուր կրճատումը պայմանավորող հիմնական գործոն հանդես գալով: Ավտոմեքենաների արտահանման ծավալի կրճատումը շարունակվեց (նվազումը՝ 36.4 տոկոս տ/տ): Այս նվազումների ազդեցությունը աճի վրա թուլացավ գյուղատնտեսական մթերքի (աճը՝ 23.3 տոկոս, տ/տ), պատրաստի սննդամթերքի (աճը՝ 24.3 տոկոս, տ/տ), մեքենաների (աճը՝ 36.4 տոկոս, տ/տ) և հանքանյութերի (աճը՝ 11.8 տոկոս, տ/տ) արտահանման աճի շնորհիվ: Հաշվի չառնելով թանկարժեք քարերի և մետաղների և քարերի վերաարտահանման առևտուրը՝ արտահանման և ներմուծման աճը կազմել է համապատասխանաբար 19 տոկոս (տ/տ) և 5.5 տոկոս (տ/տ): 2025 թ. հուլիսին զբուսաշրջիկների ժամանումներն ավելացան 11 տոկոսով (տ/տ)՝ երեք

ամիս անընդմեջ աճելով: Թեպետ հունվար-հուլիս ամիսներին ժամանումների աճողական ցուցանիշը նվազեց մեկ տոկոսով (տ/տ), աճը վկայում է տեմպի աստիճանական վերականգնման մասին: Օգոստոսին համախառն միջազգային պահուստներն ավելացան 173.6 միլիոն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 4.2 միլիարդ, որը համարժեք է 3.4 ամսվա ներմուծման ծածկույթի:

Օգոստոսին ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվեց 0.3 տոկոսով (ա/ա տվյալ ամիսը՝ նախորդ ամսվա նկատմամբ) և 1.3 տոկոսով (տ/տ): Ռուբլու նկատմամբ այն կայուն մնաց (ա/ա), միաժամանակ 1.7 տոկոսով արժեզրկվելով եվրոյի նկատմամբ: 2025 թ.-ի սկզբից ի վեր ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվեց 3.7 տոկոսով: Փետրվար-հունիս ամիսների ժամանակահատվածում ՀՀ ԿԲ-ն միջամտություն կատարեց արտարժույթի շուկայում և գնեց մոտավորապես 750 միլիոն ԱՄՆ դոլար՝ փոխարժեքի տատանումները հարթելու համար:


Հուլիսին առևտրային բանկերի ավանդները և վարկերն աճեցին համապատասխանաբար 0.3 տոկոսով (ա/ա) և 1.2 տոկոսով (ա/ա): Հուլիսին, հունիսի համեմատ, ավանդների և վարկերի աճի տեմպի արագացումը հիմնականում ՀՀ դրամով արտահայտված ավելի մեծ թվով գործիքների օժանդակությամբ էր, իսկ վարկերի աճը պայմանավորող առաջնային գործոնը սպառողական վարկերը և ֆինանսական ու ապահովագրական գործունեության վարկավորումն էին: Փոխարժեքով ճշտված տարեկան աճը կազմել է ընդհանուր ավանդների 13.6 տոկոսը (տ/տ) և վարկերի 28.5 տոկոսը (տ/տ) (պատկեր 5):

Հուլիսին բյուջեում գրանցվեց կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 0.2 տոկոսի չափով պակասուրդ: Հարկային եկամուտները (այդ թվում՝ հիփոթեքի հետ կապված եկամտային հարկը) անվանական արտահայտությամբ աճեցին 18.1 տոկոսով (տ/տ), որը պայմանավորված էր ԱԱՀ -ի հավաքագրման ավելի բարձր մակարդակով (աճը՝ 20.7 տոկոս, տ/տ), եկամտային հարկերով (աճը՝ 14 տոկոս, տ/տ) և շահութահարկերով (աճը՝ 46.7 տոկոս, տ/տ): Շրջանառության հարկի դրույքաչափերը բարձրացվեցին՝ հավաքագրումը խթանելով 29 տոկոսով (տ/տ): Ընդհանուր ծախսերը կրճատվեցին 4.8 տոկոսով (տ/տ): Մա պայմանավորված էր 42.7 տոկոսով (տ/տ) կապիտալ ծախսերի անկմամբ, ինչը պաշտպանական ծախսերի 39.1 տոկոսով (տ/տ) նվազման հետևանք էր: Հատկանշական է, որ կրթական ծախսերն աճեցին 19.7 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված Կառավարության հնգամյա

(2021–2026 թթ.) ծրագրով նախատեսված դպրոցաշինությամբ և դպրոցների հիմնանորոգմամբ: Ընթացիկ ծախսերն ավելացան 4.7 տոկոսով (տ/տ)՝ հիմնականում սուբսիդիաներով պայմանավորված (աճը՝ 21.3 տոկոս, տ/տ): Հունվար-հուլիս ամիսների ժամանակահատվածում աճողական պակասուրդը հասավ կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 0.6 տոկոսին:

Պատկեր 1. Տնտեսական ակտիվությունը 2025 թ. հուլիսին աճեց 8.9 տոկոսով (տ/տ)


(Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցիչ, տ/տ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե

Պատկեր 3. Տարեկան գնաճը փոքր-ինչ բարձրացավ՝ 2025 թ. օգոստոսին հասնելով 3.6 տոկոսի


(ՄԳԻ գնաճ, տ/տ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Պատկեր 2. Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումների բարձր՝ երկնիշ աճը շարունակվեց


(Հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Պատկեր 4. Թանկարժեք քարերի վերաարտահանումը շարունակեց նվազել, մինչդեռ ավանդական արտահանման աճն արագացավ 2025 թ. հուլիսին


(միլիարդ ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե

Պատկեր 5. Վարկերը շարունակեցին ավանդների նկատմամբ առաջանցիկ աճել


(%, տ/տ, փոխարժեքով ճշտված)



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Պատկեր 6. Բյուջեում աննշան պակասուրդ գրանցվեց 2025 թ. հունվարից հուլիսն ընկած ժամանակահատվածում

(Միլարդ ՀՀ դրամ)



Աղբյուր՝ Ֆինանսների նախարարություն